Երկրորդ ընթերցում
լրամշակված

Կ-689-14.07.2020-ՏՏԳԲ-011

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հոդված 1.* Հայաստանի Հանրապետության 2002 թվականի հունիսի 4-ի ջրային օրենսգրքի 12-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 18-րդ կետով.

«18) կառավարության հաստատած կարգով ապահովում է ցամաքուրդային (դրենաժային) համակարգերից օգտվելու համար ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրերի կնքումը եւ վերահսկում օրենքով սահմանված պահանջների կատարումը:»:

*Հոդված 2.* Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից՝

1) Կառավարությունը հաստատում է ցամաքուրդային (դրենաժային) համակարգերից օգտվելու կարգը եւ ծառայությունների մատուցման վճարի չափը, ինչպես նաեւ այդ համակարգերից օգտվելու պայմանագրի օրինակելի ձեւը՝ մինչեւ 2021 թվականի հունվարի 1-ը:

2) 2021 թվականի հունվարի 1-ից հետո ցամաքուրդային (դրենաժային) համակարգերը շահագործող կազմակերպության եւ այդ համակարգերից օգտվող սուբյեկտների միջեւ փոխհարաբերությունները ենթակա են կարգավորման ցամաքուրդային (դրենաժային) համակարգերից օգտվելու կարգով:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հոդված 1.* Հայաստանի Հանրապետության 2002 թվականի հունիսի 4-ի ջրային օրենսգրքի 12-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 18-րդ կետով.

«18) կառավարության հաստատած կարգով ապահովում է ցամաքուրդային (դրենաժային) համակարգերից օգտվելու համար ~~վճարովի~~ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրերի կնքումը եւ վերահսկում օրենքով սահմանված պահանջների կատարումը:»:

~~*Հոդված 2.* Անցումային դրույթներ~~

~~1. Կառավարությունը հաստատում է ցամաքուրդային (դրենաժային) համակարգերից օգտվելու կարգը եւ ծառայությունների մատուցման վճարի չափը, ինչպես նաեւ այդ համակարգերից օգտվելու օրինակելի պայմանագրի ձեւը՝ մինչեւ 2021 թվականի հունվարի 1-ը:~~

~~2. 2021 թվականի հունվարի 1-ից հետո ցամաքուրդային (դրենաժային) համակարգերը շահագործող կազմակերպության եւ այդ համակարգերից օգտվող սուբյեկտների միջեւ փոխհարաբերությունները ենթակա են կարգավորման ցամաքուրդային (դրենաժային) համակարգերից օգտվելու կարգով:~~

~~*Հոդված 3.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:~~

*Հոդված 2.* Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից՝

1) Կառավարությունը հաստատում է ցամաքուրդային (դրենաժային) համակարգերից օգտվելու կարգը եւ ծառայությունների մատուցման վճարի չափը, ինչպես նաեւ այդ համակարգերից օգտվելու պայմանագրի օրինակելի ձեւը՝ մինչեւ 2021 թվականի հունվարի 1-ը:

2) 2021 թվականի հունվարի 1-ից հետո ցամաքուրդային (դրենաժային) համակարգերը շահագործող կազմակերպության եւ այդ համակարգերից օգտվող սուբյեկտների միջեւ փոխհարաբերությունները ենթակա են կարգավորման ցամաքուրդային (դրենաժային) համակարգերից օգտվելու կարգով:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (*Կ-689-14.07.2020,11.09.2020-ՏՏԳՓ-011/1*) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

| № | Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը | Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը | Առաջարկություն (փոփոխություն, լրացում) | Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը | Առաջարկությունների ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| 1. | ՀՀ կառավարություն | Նախագծի 1-ին հոդված | Նախագծի 1-ին հոդվածով լրացվող 18-րդ կետում նշված «վճարովի ծառայությունների մատուցման» բառերը փոխարինել «ծառայությունների վճարովի մատուցման» բառերով: | Ընդունվել է: | Ընդունվել է: |
| 2. | ՀՀ կառավարություն | Նախագծի 2-րդ և 3-րդ հոդվածները միավորել և ներկայացնել հետևյալ խմբագրությամբ | *Հոդված 2.* Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ<br><br>1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:<br><br>2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից՝<br><br>1) Կառավարությունը հաստատում է ցամաքուրդային (դրենաժային) համակարգերից օգտվելու կարգը եւ | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ծառայությունների մատուցման վճարի չափը, ինչպես նաեւ այդ համակարգերից օգտվելու պայմանագրի օրինակելի ձեւը` մինչեւ 2021 թվականի հունվարի 1-ը:<br><br>2) 2021 թվականի հունվարի 1-ից հետո ցամաքուրդային (դրենաժային) համակարգերը շահագործող կազմակերպության եւ այդ համակարգերից օգտվող սուբյեկտների միջեւ փոխհարաբերությունները ենթակա են կարգավորման ցամաքուրդային (դրենաժային) համակարգերից օգտվելու կարգով: | | |